

# Լրատու

Թիւ 3  
Ապրիլ 2007

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակի

## Սիրելի հայրենակիցներ,

Վստահ եմ թէ բոլորդ անհամբերութեամբ կը սպասէիք «Լրատու»ի 3-րդ թիւի հրատարակութեան, տեղեկանալու համար վերջին երեք ամիսներու հրադարձութիւններուն:

Այս տարուայ առաջին եռամսեան եղաւ հրայատուկ ու արդիւնաւետ, այս իմաստով որ արձանագրուեցան կարեւոր յաջողութիւններ Կիպրահայ Համայնքը յուզող կարգ մը հարցերու գծով, ինչպէս նաեւ նախապատրաստական քայլեր առնուեցան հիմնական ու երկարաշունչ ծրագիրներու առնչութեամբ:

Փօքրամասնութիւններու պարտադիր զինուորական ծառայութեան տարիք ունեցողներու հարցը անակնկալ կերպով սեղանի վրայ դրուեցաւ անցնող Յունուար ամսուան սկիզբը: Որպէս Հայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ, խորհրդակցելէ Ետք Խորհրդատու Մարմսի անդամներուն հետ, մասնաւանդ գաղութին ապագայի շահերը չվտանգելու մտահոգութեամբ, միաձայնութեամբ որոշուեցաւ դրական կեցուածք ցուցաբերել այս նուրբ ու զգայուն հարցին նկատմամբ, միեւնոյն ատեն մատնանշելով որոշ մանրամասնութիւններ, որոնք պետք է անպայմանօրէն հարթուին այս հարցը իրականանալու պարագային:

Ինչպէս արդէն տեղեակ էք մամուլէն եւ պատկերասփիւրի կայաններէն, Մելգոնեան Կրթական Հաստատութեան կալուածին մեծ մասը, 2 Մարտ 2007-էն, դարձեալ պաշտօնապէս առնուեցաւ Կիպրոսի Կառավարութեան պահպանութեան տակ: Այժմ աշխատանք կը տարուի Մելգոնեան Կրթական Հաստատութեան մատենադարանի գիրքերը եւ մամուլի հաւաքածոները փրկելու առնչութեամբ: Այս մասին մանրամասնութեամբ անդրադարձ

Ենք «Լրատու»ի յաջորդող էջերուն մԵՇ:

Անշուշտ այս բոլորին կողքին շարունակեցի ուսենալ զանազան հանդիպումներ, պատկան նախարարներու եւ մարմիններու հետ, ինչպէս նաեւ, պաշտօնապէս հրաւիրութով, ներկայ գտնութեցայ Կիպրոսի մԵՇ գործող կուսակցութիւններու գերազոյն ժողովներուն, սերտացներու համար Յայ Յամայնքի կապերը: Տեսակցութիւններ ուսեցայ զանազան դեսպաններու եւ դեսպանատուններու քաղաքական եւ մամլոյ անձնակազմի պատասխանատուններուն հետ, որոնք, անձամբ հեռաձայնելով, ներկայացան գրասենեակս, մօտեն ծանօթանալու համար Կիպրահայ գաղութի պատմութեան եւ ներկայ իրավիճակին:

Ինչ կը վերաբերի Կիպրոսի մԵՇ աշխատանքային արտօնագիրով թևակութիւն հաստատողներուն, ապա, ըստ նոր օրենքի, եթէ անոնք մինչեւ 23 Յունուար 2006 թուականը ամբողջացուցած են օրինաւոր եւ իրերայաջորդ կեցութեան հինգ տարին եւ կրցած են ապահովել գալիք 18 ամիսներու գործի համաձայնագիր, կրնան դիմել մՆայուն կեցութեան եւ աշխատանքի արտօնագիր ստանալու համար: Անշուշտ կան նաեւ այլ մանրամասնութիւններ, որոնք պետք է եւս ամբողջացուցած ըլլան:

Թերեւս ալ աւելորդ չէ յիշել թէ անցնող ամիսներուն եւս գրասենեակի աշխատանքները կը շարունակուին հեզասահ կերպով, եւ մեր հաւաքական օժանդակութիւնը անխտիր կերպով ի սպաս կը դրուի բոլորին տրամադրութեան տակ:

Ս. Զատկուան առիթով ընդունեցեք իմ սրտագին բարեմաղթութիւնները:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց, օրինեալ է Յարութիւնն օրիստոսի:

**Վարդգէս Մահտեսեան**

**Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչ**

## ԵՌԱՎԱԾԱՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

### **Աշխատանքային**

Աշխատանք ունենալու խնդրանքով ներկայացած երիտասարդ մը եւ տիկին մը, Պրն. Մահտեսեանի յանձնարդութեամբ, տարբեր պաշտօններ ստանձնեցին անուանի հաստատութիւններու մէջ:

### **Քաղաքացիական հարցեր եւ կեցութիւն**

Քաղաքացիութեան համար դիմում կատարած չորս անձեր, վերջին երեք ամիսներու ընթացքին, Պրն. Մահտեսեանի միջամտութեամբ, յաջորդաբար ստացան Կիպրական հպատակութիւն: Պետք է նշել որ վերոյիշեալ դիմորդները կ'ամբողջացնեին բոլոր պայմանները:

Սուրբհափառակ հայ մը, որ երկար տարիներ աշխատանքային օրինաւոր արտօնութեամբ Կիպրոս կը բնակեր, վերջին տարուայ արտօնագիրը ապահովուած չըլլալուն բերումնվ բանտարկուած էր Երեքաբթի, 13 Փետրուար 2007-ին:

Պրն. Մահտեսեանի անմիջական միջամտութեամբ եւ Ներքին Գործոց Նախարար Պրն. Նեղոլիս Սիլիքիոսիսի աջակցութեամբ, ան երրորդ օրը ազատ արձակուեցաւ եւ յառաջիկայ մէկ տարուայ համար աշխատանքային արտօնագիր ստացաւ

Քաղաքական հարցերու պատասխանատուի Օտարակապատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքի գրասենեակներ եւ ոստիկանատուներ կատարած ամենօրեայ այցելութիւններու շնորհիւ, կարելի եղաւ ապահովել կեցութեան արտօնագրեր, իսկ Քաղաքական կապատանեալի կաղգավիճակ ունեցող բազմաթիւ հայրենակիցներուն համար՝ հիւանդանոցային գրքոյկներ:

### **Կրթանպաստ**

Americanos College-Էն 75% Կրթանպաստ ստացան Մելգոնեան Կրթական Հաստատութեան շրջանաւարտ երկու աշակերտներ, Պրն. Մահտեսեանի բարեխօսութեամբ:

### **Մելգոնեան Կրթական Հաստատութիւն**

Կիպրոսի Հանրապետութեան Ներքին Գործոց Նախարար Պրն. Նեղոլիս Սիլիքիոսիսի 2 Մարտ 2007-ին հրապարակած հրամանագիրով վերահաստատուեցաւ Մելգոնեան Կրթական Հաստատութեան հողատարածքին պահպանումը կառավարութեան կողմէ: Այս հրամանագիրը օրինաւոր կերպով հրատարակուեցաւ Կիպրոսի Հանրապետութեան պաշտօնաթերթին մեջ, Բաժին III(i), թիւ 4178 յօդուածին տակ, որպէս պատմա-մշակութային արժեք ներկայացնող կառոյց:

Ինչպէս ծանօթ է բոլորին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Միացեալ Նահանգներու Կեդրոնական Վարչութեան տարած աշխատանքներուն շնորհիւ, անցեալ տարուան Դեկտեմբեր ամսուն Մելգոնեան Կրթական Հաստատութեան գոյգ դատերու վճիռներու արձակումը ի վնաս Հաստատութեան էր:

Կիրակի, 14 Յունուար 2007-ին, Մելգոնեան Եղբայրներու հոգեհանգստեան արարողութեան ետք, տեղի ունեցաւ հաւաք մը, Առաջնորդարանի «Հիթիւմեան» սրահին մեջ, կազմակերպութեամբ Մելգոնեան Կրթական Հաստատութեան Կիպրոսի Սանուց Միութեան:

Հաւաքին երկու շաբաթ ետք, տեղի ունեցաւ հանդիպում մը եւս, Ազգային Առաջնորդարանի Դահլիճին մեջ, մասնակցութեամբ գաղութի կուսակցութիւններու, ակումբներու եւ միութիւններու ներկայացուցիչներուն: Այս հանդիպումը կը հովանաւորէին Կիպրահայ Գաղութի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգես Մահտեսեան

Եւ Կաթողիկոսական Փոխանորդ Արք. Վարուժան Հերկելեան:

Ժողովը մասրամասնութեամբ քննելէ Ետք հարցին բոլոր ծալքերը, յանգեցաւ այն եզրակացութեան որ կարելի չէ ձեռնածալ մսալ Եւ ընդունիլ Գերագոյն Աստեանին Վճիռը Եւ փոխանակ խաղաղ ցոյցով Ներկայանալու համրութեան, որոշուեցաւ ազդեցիկ նամակներ յղել Կիպրոսի Ընդհանուր Դատախազ Պրև. Պետրոս Օլիրիտիսին, Ներքին Գործոց Նախարար Պրև. Նեղուիս Սիլիքիոտիսին Եւ Կիպրոսի Կուսակցապետերուն, ստորագրութեամբ Յայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչին Եւ Կաթողիկոսական Փոխանորդին: Այս նամակներուն կցուեցաւ բոլոր հայապատկան կուսակցութիւններուն Եւ կազմակերպութիւններուն ցանկը:

Արդիւնքը եղաւ արդիւնաւետ, անգամ մը Եւս փաստուեցաւ թէ Կիպրահայ Յամայնքի միացեալ ու աննկուն կամքը կարելի չէ անտեսել:

Պետական Ներկայացուցիչը հեռաձայնով Եւ պաշտօնական նամակով մը իր ու Յայ Յամայնքին խորիին շնորհակալութիւնները յայտնեց Պրև. Նեղուիս Սիլիքիոտիսին, մեծապէս գնահատելով անոր տարած հայանպաստ ջանքերը: Տեղական մամուլը, հեռատեսիլի կայաններն ու ռատիկայանները լայնօրէն անդրադառն այս պատմական եղելութեան: Պրև. Մահտեսեան, զանազան հարցազրոյցներու ընթացքին, իր Եւ Կիպրահայ Յամայնքի Երախտագիտութիւնը յայտնեց Կիպրոսի Կառավարութեան, որ անընկճելի հաստատակամութիւն ցուցաբերելով, իր պաշտպանութեան տակ առաջ էր Կիպրահայութեան Եւ համայն Յայութեան համար պատմական արժեք Ներկայացնող Յաստատութիւնն ու անոր շրջակայքը:

Աւելորդ կը նկատենք անդրադառնալ Կիպրոսի Եւ արտասահմանի մէջ գործող միութիւններու Եւ ապրող հայ անհատներու բազմաթիւ հեռաձայններուն Եւ շնորհաւո-

րագիրներուն, սակայն «Լրատու»ի միջոցաւ կ'ուզենք փոխանցել մեր շնորհակալութիւնները, անգամ մը եւս վերահաստատելով թէ Մելգոննեան Կրթական Յաստատութեան արժեքը անսակարկելի իրականութիւն է սփիտքահայ կեանցելն երս, եւ եթէ պէտք ըլլայ դարձեալ մեր ճիգերը ի գործ պիտի դնենք յանուն անոր պահպանութեան:

### **Պարտադիր գինուորական ծառայութիւն**

Երեքաբթի, 9 Յունուար 2007-ին Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչը, Մարոնիթ եւ Լատին համայնքներու Ներկայացուցիչներուն հետ, իրաւիրութցաւ հանդիպում մը ունենալու Պաշտպանութեան Նախարարութեան Ընդհանուր Տնօրինին հետ: Յանդիպման ընթացքին փոխանցուած է թէ, ըստ Ելորպական Սիութեան օրենքներուն, փոքրամասնութիւնները պիտի վայելն հաւասար իրաւունքներ, հետեւաբար, գինուորական պարտադիր ծառայութիւնը անհրաժեշտ է հաւասար իրաւունքներ ունեցող քաղաքացիներու համար:

Յանդիպումի ընթացքին Պրն. Մահտեսեան դրական կեցուածք ցուցաբերած է վերոյիշեալ հարցին առնչութեամբ: Խորհրդատու Մարմսի կարծիքը առնելէ ետք, պատշաճ նկատութցաւ նոյն կեցուածքը որդեգրել եւ Յայ Յամայնքի մտահոգութիւնները պարունակող պաշտօնական նամակ մը յղել Յանրապետութեան Նախագահ Պրն. Տասոս Փափատորբուլոսին:

Այս հարցին առնչութեամբ, Յունուար 24-ին, Պետական Ներկայացուցիչը ելոյթ մը ունեցաւ Կիպրոսի Ռատիկայանի 3-րդ ալիքն, որուն յաջորդեցին Յանրապետութեան յունական եւ օտարալեզու թերթերուն տրուած շահեկան հարցազրոյցները:

## **Յանձնախումբեր**

Երեսփոխանական գրասենեալի կողմէ կազմուած յանձնախումբերը պարբերաբար իրենց հանդիպումները եւ ժողովները կ'ունենան, ըլլան անոնք գրասենակէն ներս կամ դուրս:

Խորհրդատու Մարմինը հանդիպում ունեցաւ, օրակարգի վրայ ունենալով պարտադիր գինուորական ծառայութեան եւ Մելգոնեան Կրթական Յաստատութեան հարցերը: Մշակութային յանձնախումբի անդամները գրասենեակէն դուրս երկու առիթներով հանդիպեցան Մշակութային Կեդրոնի մը յարմար վայրի մը ընտրութեան համար, իսկ Երիտասարդական յանձնախումբը ժողովի հրաւիրուեցաւ մշակելու համար ապագայ ծրագիրներ:

Կազմուեցաւ նաեւ Բարեսիրական Օժանդակութեան յանձնախումբ մը, որ իր անդրանիկ նիստը գումարեց Ուրբաթ, 9 Փետրուար 2007-ին, որուն յաջորդեցին երկու այլ մանրամասնութիւններ ընսող ժողովներ:

### **«Գալայճեան» Յանգստեան Տուն այցելութիւն**

Կիրակի, 31 Դեկտեմբեր 2006-ին, Տեր եւ Տիկ. Վարդգես Մահտեսեան, ընկերակցութեամբ Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Արք. Վարուժան Յերկելեանի, այցելեցին «Գալայճեան» Յանգստեան Տուն եւ, Ամանորեայ անհատական նուերներով, պատուեցին մեր տարեց հայրերն ու մայրերը, շնորհաւորեցին անոնց Նոր Տարին եւ Ս. Ծնունդը, սրտաբուխ բարեմաղթակըներով:

### **Շնորհաւորական գիրեր**

Յինգշաբթի, 1 Փետրուար 2007-ին, Պրև. Վարդգես Մահտեսեան շնորհաւորական գիրեր յդելով Տիկ. Սուա Կարկալոյեանին եւ Պրև. Յայկ Իւթիւնեանին, իր երախտագիտութիւնը յայտնեց բարձրորակ կատարողականութը, սրտաբուխ բարեմաղթակըներով:

թիւն ունեցող զոյգ արուեստագէտներուն, մաղթելով նորանոր յաջողութիւններ արուեստի ասպարեզին մէջ:

Չորեքշաբթի, 21 Փետրուար 2007-ին, Պետական Ներկայացուցիչը շնորհաւորական նամակ մը յդեց Պրն. Աքիս Ջլեանթուսին, Կրթական եւ Մշակոյթի Նախարար Նշանակուելու առիթով, ուր, զօրակցութիւն յայտնելու կողքին, մասնաւորաբար ընդգծուած էր Կիպրոսի Կրթական եւ Մշակութային վերելքի աշխատանքներով Պետական Ներկայացուցիչի անմիջական հետաքրքրուած ըլլալու իրողութիւնը:

### **Յաւակցագիրներ**

Ուրբաթ, 19 Յունուար 2007-ին, յաւակցագիրներ յղուեցան Պոլսոյ Պատրիարք Նորին Ամենապատութիւն S. Մեսրոպ Արք. Մուրաֆեանին, «Ակոս» շաբաթաթերթի խմբագրութեան եւ աշխատակազմին, դատապարտելով Յրանդ Տիւքի հանդեպ գործուած անարգ ոճիրը, ընդգծելով թէ ան իր գրիչով պայքարեցաւ ու իր կեանքին գնով ապացուցեց թէ կարելի չէ լրեցնել ճշմարտութեան ձայնը:

Երկուշաբթի, 26 Մարտ 2007-ին Պրն. Սահմեսեան յաւակցագիր մը յդեց Յայաստանի Յանրապետութեան Նախագահ Նորին Վսեմութիւն Տիար Ռոպերթ Ջոչարեանին, Յայաստանի Յանրապետութեան Վարչապետ Անդրանիկ Մարգարեանի վաղաժամ մահուան տիսուր առիթով:

### **Առաքուած նամակներ**

Յիսգշաբթի, 4 Յունուար 2007-ին, Նոր Տարին եւ Ս. Ծնունդը շնորհաւորող նամակներ առաքուեցան Յայաստանի Արտաքին Գործոց Նախարար Պրն. Վարդան Օսկանեանին, Յայաստանի Յանրապետութեան Յունաստանի Կիպրոսի Լիազօր Դեսպան Պրն. Վահրամ Կաժոյեանին եւ Յայաստանի Յանրապետութեան Նախագահի Արարողակարգի անձնակազմին:

Յինգշաբթի, 25 Յունուար 2007-ին, պաշտօնական նամակ մը առաքուեցաւ Յանրապետութեան Նախագահ Պրն. Տասոս Փափատորովուրսին, փոքրամասնութիւններու պարտադիր զինուորական ծառայութեան հարցին առնչութեամբ: Նամակը դրական տրամադրութիւններ պարունակելով հանդերձ, կը մատնաևշեր այս մտահոգութիւնները որոնք կը յուգեն Յայ Յամայսքը եւ կը խնդրուէր Պրն. Նախագահին լուծում տալ անոնց, նախքան ընդառաջելու այս որոշումին:

Յինգշաբթի, 8 Փետրուար 2007-ին, Պետական Ներկայացուցիչը նամակով մը տեղեակ պահեց Վրտաքին Գործոց Նախարարութեան Ընդհանուր Տնօրին Պրն. Ալեքսանտրոս Զինոնը, Մայիս 6-ին նախատեսուած դեպի Մակարայ Վանք ուխտագնացութեան մասին, խնդրելով որ հարկ եղած քայլերը առնուին ուխտագնացութեան խաղաղ երթը ապահովելու համար:

Յինգշաբթի, 15 Մարտ 2007-ին, նամակ մը յղուեցաւ Ներքին Գործոց Նախարարութեան Ընդհանուր Տնօրին Տօքը. Լազարոս Սավիտիսին, ուր մասնաւորաբար կ'արծարծուէր փոքրամասնութիւններու գերեզմանատուններու հոգատարութեան հարցը:

Ուրբաթ, 16 Մարտ 2007 թուակիր նամակով մը, Պետական Ներկայացուցիչը առաջարկեց Յայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչութեան նախագահ Պրն. Պերճ Սեղրակեանին Մելգոնեան Կրթական Յաստատութեան արժեքաւոր գրադարանը ժամանակաւորապէս տեղափոխել եւ ի պահ դնել Կիպրոսի Պետական Յամալսարակի յատուկ բաժանմունքի մը մէջ, զանոնք փճացումն եւ կորուստն փրկելու մտահոգութեամբ եւ տեղեկացուց թէ արդեն նախնական աշխատանք տարած ու բերանացի համաձայնութիւն ապահոված է: Պրն. Մահտեսեան նամակի մէջ նշեց նաեւ թէ գիրքերը պիտի ցանկագրուին ու դրուին համացանցի

(Internet) վրայ, մինչեւ որ Հ.Բ.Ը.Ը որոշէ անոնց ճակատագիրը:

Երեքաբթի, 20 Մարտ 2007-ին, Պր. Մահտեսեան նամակ մը յդեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կիպրոսի «Արարատ» Ֆութսալի խումբի նախագահ Տոքթ. Վահագն Աղամեանին, շնորհաւորելով խումբի ախոյեանութիւնը եւ իր երախտագիտութիւնը յայտնեց խումբի մարզիչներուն ու մարզիկներուն, որոնք անզամ մը եւս բարձր պահեցին Կիպրահայ Համայնքի դերակատարութիւնը մարզական աշխարհին ներս:

### **Պետական-պաշտօնական մակարդակի հանդիպումներ ու ժողովներ**

Չորեքաբթի, 24 Յունուար 2007-ին, Սոցիալ Դեմոկրատ Հայակեան Կուսակցութեան պատուիրակութիւն մը հանդիպեցաւ Պր. Մահտեսեանին հետ: Անոնք Պետական Ներկայացուցիչին հետ քննարկեցին Կիպրահայութիւնը յուզող հարցեր:

Երեքաբթի, 6 Փետրուար 2007-ին, Պր. Մահտեսեան տեսակցութիւն մը ունեցաւ Ծրագրումներու Գրասենեակի Ընդհանուր Տնօրին Պր. Անտրեաս Մօլեսքիսին հետ: Հանդիպումի ընթացքին շօշափուեցան երկարաշունչ ծրագրումներու հետ առնչուող կարգ մը մանրամասնութիւններ: Այս տեսակցութեան յաջորդեց հանդիպում մը եւս Պր. Մօլեսքիսին հետ, Յինգշաբթի 8 Մարտ 2007-ին, որու ընթացքին ներկայ էր նաեւ Ծրագրումներու Բաժանմունքի պատասխանատու Պր. Եղողոս Եղողիոս: Պետական Ներկայացուցիչը անոնց յանձնեց թղթածրաբներ, որ կ'ընդգրկեին մի քանի հիմնական ծրագիրներու առաջարկներ:

Երեքաբթի, 13 Փետրուար 2007-ին, Պետական Ներկայացուցիչը եւ Վարուժան Արքայիսկոպոս տեսակցութիւն մը ունեցան Կիպրոսի Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ

Պետ Արք. Խրիստոսոմոս Բ.ի հետ:

Նոյն օրը, կեսօրեւ եռք Պր. Մահտեսեան, իր գրասեւեակին մէջ, հանդիպեցաւ Պր. Վարդան Մալեանի եւ Կիպրոսի Յեղատեսիլի Կայանի արտադրիչ Պր. Դակիս Ելիայի հետ, Նիւթ ունենալով հայերեւ լեզուով պատմամշակութային, գրական, երաժշտական, կրօնական, ընկերային եւ մարզական յայտագիրներու պատրաստութեան կարելիութիւնը, պետական հեղատեսիլի կայանին սփռելու նպատակով:

Յինգշաբթի, 15 Փետրուար 2007-ին, Պետական Ներկայացուցիչը հանդիպում մը ունեցաւ Artos Foundation-ի Տնօրեւն Պր. Ախիլեաս Քենթօնիսի հետ, մշակութային ծրագիրներու ֆինանսաւորումը Ելրոպական հիմնադրամ ապահովելու կարելիութեան գծով:

Յինգշաբթի, 22 Փետրուար 2007-ին, Պր. Մահտեսեան հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի Յոնի Չարգացման Յիմնարկի (K.O.A.G.) Փոխ-Ընդհանուր Տնօրեւն Պր. Խրիստոս Խրիստոսուլոյի հետ, մտեն հետապնդելու համար Կիպրահայ ընտանիքներու կողմէն ներկայացուած բնակարանային դիմումները:

Մարտ ամսուայ Երկրորդ եւ Երրորդ շաբթուայ ընթացքին, տեղի ունեցան Կիպրական կարգ մը կուսակցութիւններու տարեկան ընդհանուր ժողովները, որոնց ներկայ գտնուելու համար, յատուկ իրակրուեցաւ Պր. Մահտեսեան: Սերտ կապեր հաստատելու միտումով, Պետական Ներկայացուցիչը, յաջորդաբար 11, 14 եւ 17 Մարտին ներկայ գտնուեցաւ Ելրոպայից Թոմմա, Տիսի եւ Էտէք կուսակցութիւններու ժողովներուն:

Երկուշաբթի, 5 Մարտ 2007-ին Պր. Մահտեսեան արդիւնաւետ ճաշ-հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի Պետական Յամալսարանի Ընդհանուր Տնօրեւն Տոքթ. Աթավոս ԶԵՆԻՈՍԻ, Տնօրեւնի Օգնականներ Տոքթ. Կոստանդինոս

Խրիստոֆիտիսի եւ Տոքթ. Անտոնիս Ջաքասի հետ: Յանդիպման նիւթը էր քաջալերել Կիպրոսի աշակերտները որ անոնք եւս յաճախեն Կիպրոսի Պետական Յամալսարան, ինչպէս նաեւ լուծում մը գտնել Մելգոնեան Կրթական Յաստատութեան գրադարանի գիրքերը ժամանակաւրացնեան Կիպրոսի Պետական Յամալսարան տեղափոխելու եւ զանոնք փճացումն ու կորուստն փրկելու կարելիութիւնները:

Ուղբաթ, 16 Մարտ 2007-ին, Պրև. Մահտեսեան տեսակցութիւն մը ունեցաւ Ներքին Գործոց Նախարարութեան ընդհանուր տևորէն Տոքթ. Լազարոս Սավիտիսին հետ, քաղաքացիութեան եւ կարգ մը այլ հարցերու կապակցութեամբ:

Երկուշաբթի, 19 Մարտ 2007-ին, Պրև. Մահտեսեան հանդիպում մը ունեցաւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Քաղաքային Յարցերու պատասխանատու Պրև. Քիօք Շիռթանիին հետ: Յանդիպման ընթացքին արձարձուեցան Մակարայ Վանք ուխտագնացութեան եւ Ay. Dometios-ի կանաչ գոտիի մէջ գտնուող հայկական գերեզմանատան Երկշաբթեայ դրութեամբ այցելութեան հարցերը:

Այս վերջինին գծով 28 Մարտ 2007 թուակիր նամակով մը Պետական Ներկայացուցիչը տեղեակ պահուեցաւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Քաղաքային Յարցերու պատասխանատուին կողմէ, թէ ընդունած են շաբաթական դրութեամբ գերեզմանատան այցելութեան առաջարկը: Յաւելեալ մասրամասնութեանց համար կը խնդրուի դիմել Ազգային Առաջնորդարան:

Նոյն օր Պետական Ներկայացուցիչը իր գոասենեակին մէջ հանդիպեցաւ Cyprus Anti-Drugs Council-ի Ներկայացուցիչներուն հետ, որոնք իրենց պատրաստակամութիւնը յայտնեցին այս հարցով Կիպրոսի գաղութին ծրագիրներուն ընդառաջել, երբ կարիքը զգացուի:

### **Դեսպանութիւններ**

Յիսգշաբթի, 25 Յունուար 2007-ին, Միացեալ Նահանգ-ներու դեսպանատան քաղաքական հարցերու պատասխանատու Պրն. Կրեկորի Մաքրիս, այցելելով Երեսփոխանական Գրասենեակ, տեսակցութիւն մը ունեցաւ Պետական Ներկայացուցիչին հետ, Կիպրահայութեան անցեալին ու Ներկայ իրավիճակին մօտէն ծանօթանալու նպատակով:

Երեքշաբթի, 30 Յունուար 2007-ին, Խրայելի Դեսպան Պրն. Ավրահամ Յատտատ իրաւիրեց Պրն. Մահտեսանը հանդիպում մը ունենալու դեսպանատան մէջ, մօտէն ծանօթանալու համար Կիպրահայ Յամայնքի պատմութեան:

Ուրբաթ, 2 Փետրուար 2007-ին, Ֆրանսայի Դեսպանատան կցորդ Տիկ. Լաուրա Լեշարփենթիեր եւ Մամլոյ պատասխանատու Տիկ. Ռեպեր Վիոլարիս, իրեսց նախաձեռնութեամբ, այցելեցին Երեսփոխանական Գրասենեակ եւ հանդիպում մը ունեցան Պրն. Մահտեսանին հետ, նիւթ ունենալով Փոքրամասնութիւնները Կիպրոսի մէջ:

Յիսգշաբթի, 15 Մարտ 2007-ին, Պետական Ներկայացուցիչը Երեսփոխանական Գրասենեակին մէջ հանդիպում մը ունեցաւ Յոլանտայի Դեսպան Պրն. Ժան Երիք վան տես Պերկի հետ, որ նոյնպէս փափաք յայտնած էր ծանօթանալ Կիպրահայ Յամայնքի պատմութեան եւ Ներկայ իրավիճակին:

### **Զեռնարկներու Ներկայութիւն**

Չորեքշաբթի, 31 Յունուար 2007-ին Պետական Ներկայացուցիչը իրաւէր ստանալով հայազգի արուեստագետներ Պրն. Յայկ Իւթիւնեանեն եւ Տիկ. Սոնա Կարկալոյեանեն, Ներկայ գտնուեցաւ Կիպրոսի Կրթական եւ Մշակոյթի Նախարարութեան կողմէ կազմակերպուած շքեղ համերգին:

Կիրակի, 11 Փետրուար 2007-ին, Պրն. Մահտեսեան ներկայ գտնուեցաւ Մարոնիթ Յամայնքի Նիկոսիոյ Եկեղեցոյ մեջ մատուցուած Ս. Մարոն տօնի արարողութեան: Այս առիթով ան կարճ հանդիպում մը ունեցաւ Մարոնիթներու Վրքեափսկոպոս Պութրոս Ժըմայէլի հետ:

Կիրակի, 18 Փետրուար 2007-ին, Տէր եւ Տիկ. Վարդգես Մահտեսեան ներկայ գտնուեցան Լիմասոլի Յայ Ակումբի կազմակերպած Բարեկենդասի հաւաքոյթին:

Կիրակի, 11 Մարտ 2007-ին, Տէր եւ Տիկ. Վարդգես Մահտեսեան ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Յայ Երիտասարդաց Ակումբի եւ Յ.Ս.Ը.Ը.ի կազմակերպած աւանդական ճաշի պազարին:

Չորեքշաբթի, 14 Մարտ 2007-ին, Տէր եւ Տիկ. Վարդգես Մահտեսեան ներկայ գտնուեցան Յայ Օգնութեան Սիութեան «Սոսէ» մասնաճիւղի կազմակերպած Միջինքի ընթրիքին:

Շաբաթ, 24 Մարտ 2007-ին Տէր եւ Տիկ. Վարդգես Մահտեսեան ներկայ գտնուեցան, Յամազգայինի Կիպրոսի «Օշական» մասնաճիւղի կազմակերպութեամբ, Լիբանանին հրաւիրուած «Կարկաչ» պատասեկան Երգչախումբի համերգին եւ յաջորդ օրը՝ Լառնագայի Յայ Ակումբի կազմակերպած կեսօրուան ճաշին:

### **Կիպրոսի Կրօնական Յամայնքներուն նուիրուած ձեռնարկ**

Չորեքշաբթի, 7 Փետրուար 2007-ին Լիմասոլի Laniteio Lyceum B վարժարանին մեջ տեղի ունեցաւ ձեռնարկ մը, նուիրուած Կիպրոսի Կրօնական Յամայնքներուն: Զեռնարկին ներկայ էին Լիմասոլի Սետրոպոլիտ Աթանասիոս Եպիսկոպոս, Վարուժան Վրքեափսկոպոս, Թուրք կիպրացի իմամը, Մարոնիթներու եւ Լատիններու հոգեւոր առաջնորդները, Լատին Պետական Ներկայացուցիչը եւ Կրթական ու Մշակոյթի Նախարարութեան ներկայացու-

ցիչը: Զերևարկի ընթացքին յունարենով խօսք առին Յոյն, Թուրք, Մարոսիթ եւ Լատին կրօնական առաջնորդները, իսկ Յայ համայնքի անունով՝ Յայ Եկեղեցւոյ ծագումին, պատմութեան, դաւանանքին եւ Կիպրահայ գաղութի պատմութեան մասին խոսեցաւ Տոքթ. Անդրանիկ Աշճեան: Յաջորդեց ցուցահանուես մը եւ պատշաճ հիւրասիրութիւն: Տեղին է յիշել թէ Տոքթ. Աշճեանի Ներկայացումը մեծ խանդավառութիւն ստեղծեց Ներկաներուն մօտ եւ լայն ընդունելութեան արժանացաւ փոխանցուած բովանդակութեամբ:

### Փոքրամասնութիւններու կայքեջ (webpage)

Ներքին Գործոց Նախարարութեան հրաւերով Երեսփոխանական Գրասենեակի Մամլոյ Ներկայացուցիչ Տոքթ. Անդրանիկ Աշճեան, Յինգշաբթի, 1 Մարտ 2007-ին մասնակցեցաւ փոքրամասնութիւններու կայքեջի 2-րդ հանդիպումին: Կիպրոսի կառավարութեան որոշումով պիտի ծրագրուի ու ձեւատրուի Երկրի փոքրամասնութիւններուն համար կեղրոնական կայքեջ մը, ինչպէս նաեւ իւրաքանչիւր համայնք պիտի ունենայ իր առանձին կայքեջը: Յամայնքներու Ներկայացուցիչները պատասխանատու են պատրաստելու այդ կայքեջին բովանդակութիւնը:

Յայ Յամայնքի կայքեջին պատմական բաժնի պատրաստութիւնը յանձն առին Պրն. Գերրգ Զեյթունցեան եւ Տոքթ. Անդրանիկ Աշճեան:

15 Մարտ 2007-ին, Երեք կրօնական փոքրամասնութիւններու Ներկայացուցիչներուն կողմէ, Ներքին Գործոց Նախարարութեան Ընդհանուր Տնօրին Տոքթ. Լազարոս Սավիտիսին Ներկայացուեցաւ պետական կեղրոնական կայքեջի բովանդակութեան մասին առաջարկներու ցանկ մը:



### **Փաթրիք Տէվեճեանի պաշտօնական այցելութիւնը Կիպրոս**

Ուրբաթ, 23 Փետրուար 2007-ին, Ֆրանսայի խորհրդարանի երեսփոխան եւ Ժողովրդական Ծարժումի Սիութեան հայազգի ղեկավար Պրն. Փաթրիք Տէվեճեան Հանրապետութեան նախագահ Տասոս Փափատորուլոսի ծեռամբ արժանացաւ «Մակարիոս Գ. Արքեպիսկոպոսի» Մեծ Խաչին, իբրեւ նախագահը Ֆրանսայի խորհրդարանի Ֆրանսա-Կիպրոս խորհրդարանական բարեկամութեան խմբակցութեան: Կիպրոսի կառավարութեան կողմէ Պրն. Վարդգես Մահտեսեան հրաւիրուած էր Ներկայ գտնուելու պարգեւատրումի արարողութեան:

Նոյն օրը կեսօրին Պրն. Տէվեճեան եւ տիկինը ճաշի հիւրը եղան Տէր եւ Տիկ. Վարդգես Մահտեսեաններու: Յրաւիրեալներու շարքին էին Կաթողիկոսական փոխանորդ Արք. Վարուժան Յերկելեանն ու Կիպրահայ համայնքը Ներկայացնող պատկառելի անձնաւորութիւններ:

### **Ուխտագնացութիւն Սուրբ Մակարայ Վանք**

Երեսփոխանական Գրասենեակի եւ Ազգային Առաջնորդարանի միացեալ կազմակերպութեամբ, Կիրակի, 6 Մայիս 2007-ին տեղի պիտի ունենայ ուխտագնացութիւն դեպի Սուրբ Մակարայ Վանք: Մօտաւորապէս 33 երկար տարիներ ետք, առաջին անգամ ըլլալով, նման քայլ մը կ'առնուի մեծ խումբով այցելելու Կիպրահայութեան երբեմնի Սրբավայրը: Յետեւաբար կը յանձնարարենք որ մեծաթիւ մասնակցութեամբ քաջալերենք այս ձեռնարկը, կառչած մնալու համար մեր ազգային արժեքներուն:

Այս ուխտագնացութիւնը պիտի վայելէ Միջազգային Ազգերու Կազմակերպութեան Կիպրոսի ուժերու հսկողութիւնը: Տեղայն վրայ Սրբազն Յօր կողմէ պիտի մատուցուի կարճ աղօթք: Մանրամասնութեանց համար կարդալ ներփակուած յայտարարութիւնը:

**Սուրբ Մակարայ Վանք**





## Ծանօթանակը Կիպրոսի Հանրապետութեան օրէնքներուն

### Կիպրոսի Պետական Համալսարան

Կիպրոսի Սահմանադրութեամբ ընդունուած 3 կրօնական փոքրամասնութիւնները (Յայ, Մարոնիթ, Լատին) Կիպրոսի Պետական Համալսարան կրնան յաճախել տարուայ աշակերտութեան թիւի 3% համեմատութեամբ, որոնք Կիպրացի քաղաքացի են եւ կ'ամբողջացնեն հետեւեալ պայմանները.-

1. Պետական կամ Անձնական Երկրորդական Վարժարանի վկայական:

2. Կիպրոսի Պետական Համալսարանի մուտքի քննութիւն եթէ Կիպրական Երկրորդական Վարժարան յաճախած են կամ G.C.S.E. / G.C.E. եթէ Անձնական Երկրորդական Վարժարան յաճախած են:

3. G.C.S.E. / G.C.E.-Ներէն **մէկը** պէտք է ըլլալ Յունարէն լեզուի O' Level նուազագոյն նիշ C, իսկ մնացեալ **երեքը** ուսանելիք ճիւղին հետ առնչուող A' Level նուազագոյն նիշեր B,C,C: Սոյն տուեալները կրնան մասամբ մը փոփոխութեան ենթարկուիլ նայած ուսանելիք ճիւղին:

4. Դիմում Ներկայացնել 1-30 Ապրիլի միջեւ յաջորդ տարեշրջանին համար:

Կիպրոսի Պետական Համալսարանը **անճվար է բոլոր Կիպրահպատակներուն համար**: Վճարումը միայն գիրքերու համար է եւ չնչին գումար մըն ալ՝ ապահովագրութեան համար:

## **Telecare-ի սպասարկութիւն Կիպրոսի մէջ**

Մօտաւորապէս երկու ամիս առաջ, Յայ Յամայնքի Խորհրդարանական Գործակիցը հեռաձայնային կապ հաստատելով Կիպրոսի յառաջացած տարիքի մաս մը թշչակառուներուն հետ, տեղեկացուց թէ Կիպրոսին ներս կը գործէ անձնական ընկերութիւն մը, որ գործակցաբար տեղլոյն Ընկերային Ծառայութեան (Welfare office) Գրասենեակին, կը հայթայթէ գործիք մը որ 24 ժամուայ դրութեամբ օգնութիւն կը տրամադրէ այս անձերուն, որոնք առողջապահական հարցեր ունին եւ հոգատարութեան կարիքը կը զգան:

Սոյն գործիքը կը հաստատուի քնակարանին մէջ, հեռաձայնի նման, եւ կամ անհատը իր վրայ կրնայ կրել զայն, եթէ անշարժ վիճակի մէջ կը գտնուի: Գործիքը կոճակի մը սեղմումով, տեղեկութիւն կը փոխանցէ կեղրոն, երբ անհատը նեղ կացութեան մէջ գտնուի եւ շտապ օգնութեան կարիքը ունենայ:

Բոլոր անոնք, որոնք նիւթական օժանդակութիւն կը ստանան Ընկերային Ծառայութեան Գրասենեակին եւ նիւթական անբաւարար կացութեան մէջ կը գտնուին, սոյն գործիքը կրնան ստանալ անվճար, հարցը քննուելէ ետք: Սակայն, անոնք, որոնք նիւթապէս անկախ են, բայց կարիքը ունին նմանօրինակ սարքի մը զանազան պատճառներով, կրնան կապ հաստատել Երեսփոխանական Գրասենեակին հետ, դիմում կատարելու եւ ստանալու այս գործիքը: Այս պարագային.-

- Գործիքին համար կը վճարուի 30 կ.ո.
- 11 կ.ո. (առաւել VAT), իրաքանչիւր ամսուայ համար

Յաւելեալ տեղեկութեանց համար կը խնդրուի հեռաձայնել Երեսփոխանական Գրասենեակ 22-454540 թիւին:

**Վարդգես եւ Մակի Մահտեսեաններ  
Քրիստոսի Յարութեան  
սուրբ տօնին առիթով  
ի սրտէ կը շնորհաւորեն  
Կիպրահայ Համայնքը,  
մաղթելով առողջութիւն,  
խաղաղութիւն եւ արեւշատութիւն:**

***Քրիստոս յարեաւ ի մեռելոց,  
օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի***

**ԿԻՊՐԱՆԱՅ ՀԱՍՎՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ**

**Քաղաքական Գրասենեակ**

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos  
Հեռախոս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42  
Էլ. Հասցե office@armenianmp.com  
Ուստայնեց՝ <http://www.armenianmp.com>

**Խորհրդարանական Գրասենեակ**

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia  
Հեռախոս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42  
Էլ. Հասցե vmahdessian@parliament.cy